ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Զորակի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ՆԶՊ-ի (1 դրույք), քաղպաշտպանության (0,5 դրույք), մաթեմատիկայի (20 դասաժամ), երաժշտության (2 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների եւ աղջիկների խմբեր, 4-ական դասաժամ), ռուսաց լեզվի (24 դասաժամ), աշխարհագրության (10 դասաժամ), Հայաստանի աշխարհագրության (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1)
- մեկ լուսանկար 3x4 չափի
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
- անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- ինքնակենսագրություն (Ձև5)
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 8- ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Զորակի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Զորակ, Բաղրամյան 59/2: Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 52-70-00 հեռախոսահամարով: